

1331

# ՄՏԵՐՄԱԿԱՆ ԽՈՍՎԿՑՈՒԹԻՒՆ

ՄԻ ԴԵՌԱՓԹԻԹ ՕՐԻՈՐԴԻ ՀԵՏ

Գրեց

Dr. Edith B. LOWRD

Թարգմ. անգլ. բնագրից

ՊՈԼ ՇԵՔԵՐՁԵԱՆ

Գինն է 1 տոլար

*Printed in France*

613.9  
L-82

Տպարան Յ. Բ. ՅԻՒՐԱԳԵԱՆ  
227, Bd. Raspail, PARIS

1933

2010

2002

Գ13.9  
L-82

ԱՐ

Ուշական - Ա  
պատրաստ  
Կոմիտաս  
1931 թվական

# ՄՏԵՐՄԱԿԱՆ

## ԽՈՍՎԿՑՈՒԹԻՒՆ

ՄԻ ԴԵՌԱՓԹԻԹ ՕՐԻՈՐԴԻ ՀԵՏ

Հայոց, 4 օգոստ 1931.

Գրեց

Dr. Edith B. LOWRD

35444

Թարգմ. անգլ. բնագրից

МОЛ ՇԵՔԻՉԵԱՆ


Գինն է 1 տոլար

Printed in France

Տպարան Յ. Բ. ԹԻՒՐԱՊԵԱՆ

227, Bd. Raspail, PARIS

1933



4174  
5079

26961-4.2

ՄՏԵՐՄԱԿԱՆ  
ԽՕՍԿՑՈՒԹԻՒՆ  
ՄԻ ԹԵՐԱՓԵՔ ՕՐԻՈՐԴԻ ՀԵՏ



5895-57

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ոչոք կարող է շփումն ունենալ երախաների ու դեռատի մարդկանց հետ, առանց զգալու միացեալ ջանքերի կարիքը ծնողների, բժիշկների եւ ուսուցիչների, նուազեցնելու այն անբարոյական ու նուաստացուցիչ (*degrade*) ազդեցութիւնը որին ենթակայ է մեր նոր սերունդը:

Ուղիղ տեսակի ծանօթութիւնն ու հմտութիւնը պահպանում է բազմաթիւ խորտակուած կեանքեր: Ըստ որում իրողութիւնների տգիտութիւնը եւ նըրանց լաւագոյն կերպով ներկայացնելու պակասը շատ ծնողների արգիլում է մեղանչումն անել մի այդպիսի նուիրական դաշտի վրայ, եւ ուսումը յետաձգում է օրէց օր մինչեւ որ արդէն ուշ է լինում:



Յանկանալով օգնել մայրերին, տալու նրանց անհրաժեշտ հրահանգներն ու դաստիարակութիւնը իրանց դստերաց, այս փոքրիկ գիրքը գրուել է։ Հեղինակը աշխատել է մատչելի լեզով պատմել ու բացատրել իրողութիւններն ու նշմարտութիւնները, որ իւրաքանչիւր տասից մինչեւ տասնեւչորս տարեկան աղջիկները պէտք է իմանան։

Գիրքը այնին յատկանշական է, որ կարելի է դեռատի աղջիկների ձեռքը տալ։ Բայց առաւել եւս լաւագոյնն է, որ մայրը բարձրածայն կարդա նըրան իր աղջկան համար։

Յոյս ունինք, որ այս գիրքը կազմելու է հիմքը մօր եւ աղջկայ միջեւ աւելի մօտից մտերմանալու։ Եւ այն ուսումը որ այստեղ առաջ ենք բերում, պիտի կանխաճայնէ ու արգիլէ այն բոլորը, ինչ որ գուցէ բոլորովին տարբեր կերպով ներկայացուի աղջկայ ընկերակիցների կողմից։

### ՀԵՂԻՆԱԿԸ

### ՀԱՅ ՕՐԻՈՐԴՆԵՐԻՆ

Այս փոքրիկ գիրքը նուիրում է

Թարգմանիչը

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

---

Ահա՝ գրքոյի մը, որուն նմանը՝  
հազուալկապօրէն երեւցած է հայ իրա-  
կանութեան մէջ:

Կենսաբանական ամենակարևոր  
հարցերը՝ իրենց ամենապարզ ձեւին վե-  
րածած, ան քէեւ քարզմանութիւն,  
յատկացուած է դեռափթիթ օրիորդնե-  
րուն մայրութեան պատրաստութ եան  
գործին: Հոս կը կայսանայ կարեւոր  
մասը այս աշխատութեան եւ մանաւածդ  
գլխաւոր նորութիւնը, քանի որ սեռա-  
յին դաստիարակութիւնը, ցարդ լոկ  
բաժինը եղած էր երիտասարդ սերուն-  
դին, բայց շնորհիւ այս հիանալի գրր-  
քոյլին, ան՝ կրնայ առանց անխոհեմու-  
թեան եւ վնասակար ծդտումներու, մը-  
տերմանալ նաեւ մատաղատի հոգիներու  
հետ, խոսիլ անոնց՝ այնպիսի բաներու

մասին, ուր սխալ ըմբռնումով մը կը տիրապետէ դեռ ամօթն ու խիպը, հասկըցնել անոնց՝ կեանքի գաղտնիքները, երջանկութեան պայմանները, ապրելու ձեւերը եւ այս բոլորը կազմախօսական, բնախօսական եւ առողջապահական անհրաժեշտ եւ դիւրահասկնալի տուեալներով։

Հեղինակը, քաջածանօթ բլլալով որ ծաղիկներն ու թռչունները շատ կը հետաքրքրեն պզտիկ օրիորդները, ևնարիմացութիւնը ունեցած է անոնց վրայ բացատրելու կեանքը, յդացումի եւ արգասարերութեան խրբին հարցնը, եւ այսպէս նմանութեան եւ քաղդատութեան եզրերով եկած է եւ հասած՝ մարդկային կազմին, առանց տեղի տալու ախտավարակ կամ կասկածու հետաքրքրութեան։

Բուսական կամ կենդանական աշխարհէն առնուած այս օրինակները ոչ միայն մատչելի կը դարձնեն մատադատի տարիքի համար անմարսելի նկատուած կարգ մը ծանօթութիւնները, այլ

գանոնիք անհունօրէն օգտակար կը դարձնեն ի շահ դեռատի օրիորդներու բարյական եւ ֆիզիքական ապագայ հասունութեան։

Երբ ընտանիքի մայրերը կարենան գնահատել այս գրքին կարեւորութիւնը եւ զայն կարդան իրենց աղջիկներուն (10էն 14 տարեկան) անոնք այլ եւս պիտի չսարսափին դաշտանի առաջին երեւումէն եւ ամէն տեսակ հոգ եւ խրնամք պիտի տանին ապագայ մայրութեան։

Սեռային դաստիարակութեան այս կանխագոյն քայլը, կրնայ կատարեալ հակաքոյն մը բլլալ ապագայ ամեն կարգի մոլութիւններու եւ սեռային ախտերու, քանի որ անոնց ենթականները յանախ կամ անգիտակիցներ են եւ կամ յապաղածներ՝ սեռային դաստիարակութեան գործին մէջ։

Պգտիկ տարիքին, մերուտիկ, յարատեւ եւ հասկնալի տարագի տակ տըրուած ծանօթութիւններն են միայն որ

ապագային կրնան յառաջ բերել ամենա-  
քարար չափով արդիւնք:

Երբ ներկայի դեռատի սերունդը  
դաստիարակուի ուզուած ձեւով, ապա-  
գային պիտի ունենանք հիանալի երի-  
տասարդութիւն մը, երկու սեռէն ալ:

Առողջապահութիւնը, հիմնաբարը  
պարտի կազմել սակայն դաստիարա-  
կութեան գործին:

Այս գրեոյկը, նոր էջ մը կը բանայ  
մեր ընտանեկան եւ նոյն իսկ դպրոցա-  
կան առողջապահութեան մէջ:

Հոն՝ մայրական պատրաստութեան  
վսեմ գործէն դուրս, շատ փափուկ եղա-  
նակով մը նկատի կ'առնուին օդին կա-  
րեւորութիւնը, մարմնոյ մաքրութեան  
պէտքը, անդամներու առողջապահու-  
թիւնը, ստամուսի, աղիքի երիկամուն-  
ֆի, մորքի, եւն. օրկաններու բարտի  
պաշտօնավարութեան հարցը, ինչպէս  
նաև զգայարանիներու անեղծ մնալու  
կարեւորութիւնը, եւն. :

Դեղեցկագիտական տեսակէտով  
նաև, այս գրեոյկը կրնայ կատարեալ

խրախնանի մը պատճառել մեր փոքրիկ  
աղջիկներուն, որոնի շատ դիւրաւ պիտի  
հասկնան որ իրական գեղեցկութիւնը  
կախում ունի առողջութենէն եւ առող-  
ջապահական կանոններու նկատմամբ ե-  
ղած յարգանքէն, քէ մարզանիքը, մա-  
քուր օդը, մարմնոյ մաքրութիւնը կը  
նպաստեն գեղեցկութեան եւ առողջու-  
թեան:

Բնականաբար՝ ծանօթութեանց  
այս պաշարով սնած ոնւէ աղջիկ, այլ  
եւս չպիտի հետամտի կեանիքի գաղտ-  
նիքներուն տիրանալու, քանի որ զա-  
նոնիք ձեւով մը, շատ անվնաս ձեւով մը  
հասկցած է արդէն եւ ուրեմն, սխալ  
նամբու մէջ գտնուող իր ընկերուինե-  
րու ախտաւոր հակումներէն եւ կամ  
ցուցմունիներէն պիտի չ'ազդուի բնաւ:

Սհա՛ գիրք մը, իսկապէս հիանալի,  
զոր չենի վարանիր յանձնարարելու բո-  
լոր հայ մայրերուն, որոնց մեծագոյն ա-  
ռաքինութիւնը բլլալու է իրենց աղջրկ-  
ները մայրութեան պատրաստող ազնիւ  
մտահոգութիւնը, գիտնալով միեւնոյն

ատեն որ մարմնական առողջութիւնը, բարոյական պարտականութիւն մըն է, քանի որ ինչպէս կ'ըսէր Սփենսըր, Փիգիֆական կեանքին մէջ անգամ կայ բարոյական մը, այդ միշտ առողջ մնալու անհրաժեշտութիւնն է:

Մենք զերմօրէն յաջողութիւն կը մաղքենք այս գրեոյկին տարածման եւ մանաւանդ կը շնորհաւորենք մեր օտար արուեստակիցը եւ անոր յաջող քարգմանը՝ իրենց խիստ օգտակար ձեռնարկին համար:

ՏՕՔԹ. ՄԻՀՐԱՆ ՔԵՇԻՇԵԱՆ  
Տէր եւ Տնօրէն «Առողջ Կեանք»  
բժշկական հանդէսի

Փարիզ

5895-573544



ԳԼՈՒԽ Ա.

## ԳԱՂՏՆԻՔԸ

Լսի՛ր, Մանուշակ, ես քեզ ասելու եմ մի զարմանալի գաղտնիք։ Եւ այս զարմանալի գաղտնիքը քո համանուն, մանուշակների մասին է։ Ամէն վոքրիկ ծաղիկ, որ աճում է մի կենդանի էակ է, որպէս ինքդ, եւ կամ ես, եւ ամէն ծաղիկ մի ընտանիք է։

Ես ի՞նչպէս այդ գիտեմ։ Մաղիկներն իրանք ինձ այդ ասացին, եւ այժմ ես յայտնելու եմ քեզ գաղտնիքը։

Ի հարկէ, ես պէտք է ընդունիմ, որ ծաղիկները չեն խօսում, ինչպէս մենք ենք խօսում։ Մեզանից տարբեր, նրանք անկարող են իրանք իրանց բարձրա-



ձայն արտայայտել։ Նրանք պէտք է ցոյց տան իրանց խորհուրդները, իրանց շարժումներով եւ կամ իրանց փոփո-խութեան արտայայտութիւններով։

Երբ որ մի ծաղիկ ծառաւում է նա ի՞նչպէս այդ ասում է։ Իր գլուխը կա-խելով տիրութեամբ նայում է։ Ապա, երբոր մենք տալիս ենք նրան մի խմիչք որքան արագօրէն նա ասում է «Հորհա-կալ եմ», բարձրացնելով իր գլուխը, ու ժպտում է մեզ։

Եթէ ուզենայինք, որ ծաղիկները պատմէին մեզ իրանց գաղտնիքները, մենք պէտք է նրանց մօտից դիտենք, որպէսզի կարողանանք լսել թէ նրանք ի՞նչ են ասում։ Երբեմն, սակայն, մենք պէտք է սովորինք ուրիշներից թէ տուն-կերը ինչի են նման։ Հէնց սկզբից։ Մին-չեւ որ մենք լաւ չի ծանօթանանք, մենք անկարող կը լինենք հասկնալ նրանց, եւ գուցէ շատ սխալներ կը գործենք, հե-

տեւապէս, ես ասելու եմ մի քանի բա-ներ այսօր։

Առաջին, մենք պէտք է սովորինք մի բան ծաղիկների ընտանիքի մասին, նաեւ այն, թէ ո՞ր տեղից են ստանում ծաղիկները իրանց սնունդը։ Ծաղիկ-ները նման են մի տունկի ընտանիքին, ինչպէս նոյնը դու եւ կամ ոեւէ փոքրիկ աղջիկ մասն է մի գերդաստանի։

Դու չես կարող ըստ արժանուոյն ապրել առանց ընտանիքի միւս անդամ-ներին, — քո մայրն ու հայրը, որոնք քեզ համար շատ բան են անում, եւ քեզ այն-քան լաւ խնամք են տանում, նոյնը եւ՛ քո եղբայրն ու քոյրը, որոնք բոլորն օդնում են տունը երջանիկ դարձնելու։

Ծաղիկը նման է մի փոքրիկ աղջ-կայ եւ կարօտում է մէկին նրան խնամք տանելու։

Դու գիտե՞ս տունկի ընտանիքի միւս անդամներին։ Առաջին տան ան-դամները, որոնց գործն է տունկը իր

տեղում պահել, որպէս զի ամէն մի քա-  
մուց, չի տարութերի, շարժուի: Ար-  
մատները նոյնպէս պէտք է ծծեն ջուրն  
ու սնունդը գետնից:

Դու գիտես, որ երբ անձրեւէ գալիս  
նա թըջում է գետինը, եւ ապա, երբոր  
տունկը ջուրի պէտք է զդում, փոքրիկ  
արմատները ծծում են գետնից ճիշդ  
այնպէս, ինչպէս դու կը ծծէիր լեմոնա-  
տան մի յարդի շիւղի միջոցաւ, որով-  
հետեւ իւրաքանչիւր արմատ հայթայ-  
թում է բազմաթիւ մազախողովակնե-  
րով, որոնք ծառայում են որպէս յար-  
դեայ շիւղեր: Այդ մազախողովակները  
յաճախ այնքան փոքր են, որ մենք ա-  
ռանց խոչորացոյցի չենք կարող տես-  
նել բայց այն փոքրիկ խողովակներիցն  
է, որ տունկը ստանում է համարեայ  
բոլոր ջուրը, որ ինք գործածում է:

Տունկի միւս անդամները, տերեւ-  
ները, զբաղուած են պահում, որովհե-  
տեւ նրանք պէտք է տունկերի համար,

չնչեն եւ նոյնպէս մարսեն կերակուրը:

Դու գիտես, որ ջուրը բոլորովին  
աղատ չէ հանքային նիւթից, այնպէս  
որ երբ արմատները ծծում են ջուրը  
գետնի տակից, նրանք նոյնպէս ծծում  
են փոքր ինչ հանքային կերակուրներից  
տունկին համար, որը լուծում է ջուրին  
մէջ:

Նախ քան տունկը այս սնունդը  
դործածելը, պէտք է որ նա մարսուի  
տերեւներից, ճիշդ այնպէս, ինչպէս քո  
ստամոքսը պէտք է մարսէ քո կերած  
կերակուրները: Այսպէս ասած, պէտք է  
փոխուի մէկ ուրիշ ճեւի: Բայց որպէս  
զի տերեւները կարողանան այս անել,  
նրանք պէտք է ունենան առատ խլօրօ-  
ֆիլ, որը տերեւներին կանանչ գոյն տը-  
ւող նիւթն է:

Այս խլօրօֆիլը աճելու է տերեւնե-  
րի մէջ, եթէ նրանք ունենան առատ ա-  
րեգակի լոյս: Եւ եթէ նա չաճի, տե-

ըեւները չեն կարող մարսել սնունդը եւ  
տունկը սովամահ կը լինի:

Ուստի, դու տեսնում ես թէ որքա՞ն  
անհրաժեշտութիւն է, տունկերի հա-  
մար ունենալ առատ արեգակնային լոյս  
եւ թէ ինչո՞ւ նրանք կորցնում են իրանց  
կանանչ գոյնը, ու ապա մեռնում են,  
երբ նրանք լոյսերից հեռու են պահ-  
ում, նրանք իսկապէս սովամահ են  
լինում:

ԳԼՈՒԽ Բ.

## ԾԱՂԿԻՆ ԵՐԱԽԱՆԵՐԸ

Ծաղկիկը ինքնին ունի բազմաթիւ  
մասեր, ճիշդ այնքան շատ մասեր, որ-  
քան դու ունիս քո մարմնում։ Երբոր  
ծաղկիկը մի փոքրիկ կոկոն է, կամ երա-  
խայ, հողմիկներից նա սեղմուած փա-  
թաթուած է մի փոքրիկ կանաչ վերար-  
կուի մէջ։ Մենք այս վերարկուն ան-  
ուանում ենք calyx, ծաղկի բաժակ, ո-  
րովհետեւ երբոր նա բացւում է նմանում  
է մի բաժակի։

Կոկոնը աճելուց յետոյ, նա բաց է  
անում իր վերարկուն եւ նետում նրան  
ետեւի կողմը։ Այն ժամանակ մենք տես-  
ում ենք գեղեցիկ շըջաղգեստը ներքե-

ւում: Մենք այս հագուստը անուանում  
ենք քորոլա, ծաղկապսակ: Երբեմն,  
նա մէկ մասից է բաղկանում, բայց յա-  
ճախ բաժանում է զանազան (մէկ քա-  
նի) տերեւանման մասերի, որոնց մենք  
անուանում ենք բէդլս ծաղկաթերթեր:

Եթէ մենք նայինք հագուստից ներս  
եւ կամ քորոլային, (ծաղկաբաժակին)  
մէջ, մենք գտնելու ենք ծաղկին իրական  
մարմինը, որը կոչում է բիստը, սեր-  
մընափակ: Նրա ձեւը, յօրինուածքը,  
մեծապէս պէսպէսում է տարբեր տուն-  
կերից, բայց միշտ բաղկանում է երկու  
կամ երեք որոշ մասերից:

Մրանցից մէկը սերմերի օրօրոցն է,  
որ կոչում է օվըրի, ձուանոց: Ձուա-  
նոցի մէկ ծայրում սովորաբար լինում է  
մի խողովակ, որ առաջնորդում է նրա  
մէջ: Այս խողովակը կոչում է ծիլ  
(սերմնափակի): Եւ միւս ծայրից բացւո-  
ղը չնշածակն է, որ կոչում է ստիկմա,  
(չնշածակ): Իւրաքանչիւր ձուարան եւ

կամ օրօրան պարունակում է մէկ կամ  
աւելի ձուիկներ, որոնք տակաւ առ տա-  
կաւ, առաջնորդում են սերմերին:

Ծաղկի ճիշդ սերմնափակի դրսում  
գու սովորաբար գտնելու ես մի շարք  
նուրբ թելի նման ծիղեր, որոնցից իւ-  
րաքանչիւրը ունի մի փափուկ երկայ-  
նաձեւ յարակից մարմին իր գագա-  
թում, որոնցից թափուելու են ինչպէս  
դու պիտի տեսնես, մի գեղեցիկ դեղին  
վոշի, որ կոչում է ծաղկանց բեղմնա-  
փոշի (pollen):

Մի իսկայատուկ իրողութիւն է, որ  
այս սերմերը երբեք չեն աճում մի նոր  
տունկի մէջ, բացի այն պարագայում,  
որ նրանք արգասաւորում են այսինքն՝  
եթէ նրանք ստանում են pollen – բեղմ-  
նափոշի: Նոյնպէս մի իսկայատուկ ի-  
րողութիւն է, որ գրեթէ ամէն ծաղիկի  
այս բեղմնափոշին աճում է հէնց փոք-  
րիկ ձուիկների մօտ: Սակայն, ծաղիկ-  
ները չեն կարող արդասաւորիլ, այս

բեղմնափոշուց պէտք է, որ այն ստանան մի ուրիշ ծաղկից, որ պատկանում է մի այլ տունկի ընտանիքի: Այս բեղմնափոշին քամու կամ մեղուների եւ թիթեռնիկների միջոցով տարածւում է մէկ տունկից մէկ ուրիշ տունկ:

Խսկապէս, ծաղիկը փաղաքշում է մեղուներին եւ թիթեռնիկներին, եւ իրան է քաշում որ գան, որպէս զի նրանք կարենան բերել իրան բեղմնափոշի: Քիչ յետոյ, սերմը արգասաւորում է եւ հասունանում, այսինքն՝ պատրաստում է թողնելու իր օրօրոցը, ձուարանը:

Այժմ նա պատրաստ է աճելու, մի այլ տունկի մէջ: Բայց նախ քան նրա աճելը պէտք է նրան դնել մի փոքրիկ բոյնում գետնի մէջ:

Բայց խեղճ տունկը այնքան անօդնական է, որ նա ինքն անկարող է յարդարել այս բոյնը: Ուստի, միակ բանը, որ կարող է անել, ոչ այլ ինչ է, եթէ ոչ ցրուել իր մատաղ սերմերը դուրս գետ-

նի վրայ, յոյս ունենալով որ մէկը կը գթայ նրանց վրայ ու մի գեղեցիկ բոյն կը շինէ նրանց համար: Երբեմն, քամ ին օդնում է նրանց փոքր ինչ հող եւ մեռած տերեւներ քչելով նրանց վրայ, որովհետեւ ինչպէս դու գիտես, սերմերը չեն կարող աճել բացի այն պարագայում երբ լաւ եւ տաքուկ ծածկուած են:

Երբեմն, երախաներն ու չափահաս մարդիկ օդնում են նրան՝ պատրաստելով մի գեղեցիկ ծաղկամահիճ:

Մի երկար ժամանակ վտիտ սերմը շատ հանդարտ կերպով պառկում է իր տաքուկ բոյնում, եւ եթէ մենք գաղտնի կերպով նայինք նրա վրայ, չպիտի կարողանանք բոլորովին տեսնել նրա շարժումը, բայց բոլոր ժամանակ նա շատ դանդաղօրէն աճում է, մինչեւ որ վերջապէս մի պայծառ օր նա կ'արձակէ իր փոքրիկ ծիլերը, եւ ապա, մենք տեսնելու ենք, որ բոլոր ժամանակ սերմը այնքան հանդարտ կերպով պառկած աճում է եղել մի երախայ ծաղկի մէջ:

ԳԼՈՒԽ Գ.

## ԹՌՉՈՒԽ ԵՐԱԽԱՆԵՐԸ

Այսօր, Մանուշակ, ես պիտի յայտնեմ քեզ մի այլ գաղտնիք, բայց այս անդամ գաղտնիքը ծաղիկների մասին չէ, բայց մի ուրիշ բանի նկատմամբ, որ մենք խիստ կաթողին կերպով սիրում ենք: Ես մտադրուել եմ յայտնել քեզ փոքր ինչ գաղտնիք թուչունների մասին: Ինձ յայտնի չէ, թէ դու արդեօք իմանում ես, թէ նրանք որքա՞ն նմանում են ծաղիկներին:

Դու յիշում ես, ծաղիկներն ունին մի լեզու, որը մենք կարող ենք հասկնալ նոյն իսկ եթէ բարձրածայն էլ չի խօ-

սին: Թուչունները նոյնպէս ունին իրանց սեփական լեզուն, բարբառը, եւ նրանք կարող են աւելի լաւ արտայայտուիլ քան թէ ծաղիկները, եւ որովհետեւ նըրանք ունին լեզուի մի նշան, եւ նոյնպէս կարող են ճայներ հանել: Մենք որքա՞ն հաճոյք ենք զգում լսելով թուչունների երգելը, ոչ միայն նրա համար, որ նրանք յօրինում են սքանչելի երաժշտութիւն, այլ որովհետեւ նրանք մեզ ասում են, թէ որքա՞ն երջանիկ են:

Եթէ թուչունները ցաւի եւ կամ նեղութիւնների մէջ են լինում, նրանց ճայնանիշ նոթաներն բաւական տարբերում են, երբոր երգում են: Այն ինչ երբ նրանք, կամ նրանց փոքրիկները վտանգի մէջ են գտնում, նրանք իսկոյն, մի զգուշացնող ճայնանիշներ են դուրս բերում, դեռատի թուչունները երբ ուտելիք են ուզում մի բոլորովին տարբեր ճայներ են հանում եւ մայր թուչունի պատասխանը մի անուշ օր-

Ծերդէ : Թուչունների լեզուի նշանով արտայայտելու մէկ կերպը իրանց փետուրների միջոցով է : Եթէ նրանք հիւանդ են, նրանց փետուրները թօշնում են, խոնարհում են : Երբոր լաւ եւ երջանիկ են նրանց փետուրները աւելի պայծառանում են :

Թուչուն ընտանիքում որպէս եւ ծաղկի ընտանիքում, իւրաքանչիւր անդամը մի մասնաւոր գործ ունի կատարելիք : Մայր թուչունը եւ հայր թուչունը միասին աշխատում են շինելու բոյնը, բայց այն ինչ մայր թուչունը ածում է ձուերը, եւ ատա, պէտք է նստի նըւրանց վրայ բազմաթիւ օրեր, հայր թըռչունը պէտք է բերէ ուտելիք եւ ջուր եւ երբեմն, իր կարգին հսկէ բոյնը, երբ մայրը դնում է դուրս փոքր ինչ մարդանքի :

Մայր թուչունի մարմինը նոյնպէս նմանում է տունկին, որովհետեւ նակարօտում է թարմ օդի, սնունդի եւ ջու-

րի : Փոխանակ տերեւներից օդ առնելու նա թոքեր ունի, որը ոչ միայն ստանում է թարմ օդ, բայց նոյնպէս, դուրս է ուղարկում անմաքուր օդը : Փոխանակ փոքրիկ արմատիկների նման գետնից ստանալու սնունդն ու ջուրը, թուչունը ունի բերան, թուչունը կապուած չէ գետնին հետ, ազատ է թուչելու եւ շարժուելու եւ իր սնունդի ետեւից լինելու : Փոխանակ բուսահիւթի, նա ունի արիւն փոխագրելու սնունդը մարմնի բոլոր մասերում :

Թուչունները ունին ձուարաններ ճիշդ այնպէս ինչպէս ծաղիկները, եւ իւրաքանչիւր ձուարանի մէջտեղ կան մի խումբ փոքրիկ սերմեր, կամ ձուիկներ, որոնք տակաւ առ տակաւ զարդացնելու են թուչիկներին : Այսպէս, բաւական ժամանակ է վերցնում սերմերի հասնելը կերակուրների համար, եւ երբ որ նրանք հասնում են պէտք է պատրաստի բոյն ունենան իրանց համար,

Ճիշդ ինչպէս որ ծաղիկներն անում էին:  
Բայց թռչունները այնքան անօգնական  
չեն, որքան ծաղիկները, նրանք կարող  
են չինել իրանց սեփական բոյները:  
Ուստի, երբոր ձուիկները (որոնք կոչ-  
ում են ձուեր, երբ հասնում են) պատ-  
րաստ են, ծնողք թռչունները տան հա-  
մար պատրաստում են մի գեղեցիկ  
տուն:

Հայրն ու մայրը խիստ ծանր են  
գործում մինչեւ որ բոյնը վերջացնում  
են: Յաճախ մայրը բոյնը պատում է  
իր սեփական վետուրներով, որպէս զի  
փափուկ եւ տաք լինի: Երբոր բոյնը  
պատրաստ է մայրը ածում է նրա մէջ  
փոքրիկ ձուերը:

Ապա, նա պէտք է նստի նրանց վր-  
րայ երկար օրեր, տաք պահելու համար  
որովհետեւ ձուերը, սերմերի նման, չեն  
կարող անել բացի այն պարագայում  
որ լաւ եւ տաք են պահում: Եթէ մենք  
նայինք ձուերին օրէցօր մենք անկարող

պիտի լինինք որեւէ փոփոխութիւն  
տեսնելու նրանց մէջ, սակայն, փոփո-  
խութիւնը կեղեւին մէջն է, որ, մենք  
չենք կարող տեսնել: Ամէն օր մի փոփո-  
խութիւն է տեղի ունենում, եւ ձուերը  
աստիճանաբար ձեւափոխում են փոք-  
րիկ թռչունների:

Մի միջոցից յետոյ, երբ որ ճիշդ  
ժամանակը գալիս է, թռչնիկը կտցահա-  
րելով մի փոքրիկ ծակ է բաց անում կե-  
ղեւին վրայ: Այս բանը թոյլ է տալու,  
որ աւելի եւ աւելի աճի ու մեծանայ,  
մինչեւ որ թռչունի համար բաւականա-  
չափ խոշորցած լինի եւ թռչունը դուրս  
գայ: Եւ գալիս է դուրս:

ԳԼՈՒԽ Դ.

## ՄՕՐ ԵՐԱԽԱՆ

Մէկ ուրիշ զարմանալի գաղտնիք կայ, որ պէտք է յայտնեմ քեզ: Ես հետաքրքրում եմ իմանալ թէ արդեօք դու կարո՞ղ ես ենթադրել թէ ի՞նչ է այս գաղտնիքը: Ո՞չ, ծաղիկների մասին չէ, եւ ոչ էլ թուզունների, բայց, այո՛, ենթադրութիւնդ ճիշդ է, որովհետեւ այս գաղտնիքը քեզ նման մի աղջկայ մասին է:

Տարօրինակ չէ՞՝, թէ որքա՞ն նման են ծաղիկները թուզուններին եւ փոքրիկ աղջիկներին, վերջապէս, եթէ նոյն իսկ նրանք բոլորովին միմեանց չեն նմա-

նում: Դու ունիս թոքեր, ճիշդ այնպէս ինչպէս թոչունը, եւ չնչում ես ինչպէս նա է շնչում: Դու ունիս երկու ոտներ, բայց փոխանակ թեւեր թոչելու, դու ունիս բազուկներ եւ ձեռներ: Դու ունիս մի լեզուի նշան, ինչպէս թոչուններն ունին, եւ դու ունիս մի լեզու, որ հնչում է շատ աւելի լաւ քան թոչունների լեզուն: Երբ որ դու երջանիկ ես, ես կարող եմ այդ ասել քո դէմքի ժպիտից, եւ երբեմն, երբ դու մի քիչ նեղում ես, ես այդ իմանում եմ փոքրիկ կնծիոներից, որ մարտնչում է քո գեղեցիկ դէմքի վրայ: Բայց անշուշտ, այդ շատ յաճախ չի պատահում, որովհետեւ, դու իմանում ես, որ երբ մենք աւելի մեծանում ենք, մեր դէմքերը չեն փոխում իրանց արտայայտութիւնը այնքան հեշտութեամբ, որքան նրանք այդ անում են մեր երիտասարդութեան ժամանակ: Եւ զարհուրելի չի՞ լինելու, եթէ դու երբ մեծանաս, դէմքիդ վրայ միշտ մի

կնճիռ ունենալով բնաւ գեղեցիկ չես ե-  
րեւի: Դու գիտես, որ կնճիռները խոր-  
շոմներ են առաջ բերում մնալու նպա-  
տակով, եւ ամէն անդամ երբ մենք թոյլ  
ենք տալիս, որ դուրս գան, նրանք թող-  
նում են փոքրիկ հետքեր:

Երբոր ծաղիկները տարուան մա-  
քուր օդին մէջ կանաչ գոյնից նիւթ են  
շինում, դու էլ երբ մաքուր օդ ես ըն-  
դունում, կարմիր գոյնի նիւթ ես ստա-  
նում: Ուստի, եթէ կամենում ես, ու-  
նենալ կարմրագոյն այտեր եւ շրթունք-  
ներ, դու պէտք է ունենաս առատ մա-  
քուր օդ:

Ես գիտեմ, որ դու այդ ստանում  
ես բաւական քանակութեամբ ցերեկ  
ժամանակը, երբոր դու խաղում ես,  
բայց դու պէտք է անվրէալ լինիս, ստա-  
նալու երեկոյեաններն էլ, այլապէս  
դու կորցնելու ես քո բոլոր գեղեցիկ  
գոյնը: Անկասկած եղիր, որ քո լուսա-  
մուտը բաց է ամէն երեկոյ: Դու յիշում

ես, որ տերեւները ոչ միայն պէտք է  
չնչեն, բայց եւ պէտք է մարսեն սնուն-  
դը նաեւ տունկին համար, սակայն,  
թոչունը ունի մի ստամոքս, որ կատա-  
րում է այդ պաշտօնը: Այս կերպով դու  
թոչուններին նման ես, որովհետեւ դու  
ունիս մի ստամոքս, որը հոգ է տանում  
սնունդին, որ դու ստանում ես:

Եթէ ցանկանում ես, որ դու զար-  
դանաս, զօրանաս եւ լաւանաս, որպէս  
զի կարողանաս վազել, խաղալ, եւ միա-  
ժամանակ օդնես քո մօրը իր գործերին,  
դու պէտք է որ ուտես լաւ, առատ սնէ-  
դարար կերակուրներ: Առատ հաց եւ  
կաթ, արմտիք (հացարոյսեր) նաեւ  
միս, փաթաթէս եւ միրգ, ամենալաւ  
բաներն են որ աղջկերանց աճեցնում են:

Դու պէտք է նաեւ հոգ տանիս քո  
ստամոքսի համար, եւ ժամանակ տաս  
նրան հանգստանալու, որովհետեւ նա  
շատ ծանր կերպով գործում է, եւ կա-  
րող է յոդնաբեկ լինել: Ուրեմն, ի՞նչ

պէտք է անես: Դու տեսար, Մանուշակ,  
որ մի շարք կերպերով դու նմանում ես  
թռչուններին եւ ծաղիկներին, բայց  
այժմ, ես պէտք է ասեմ քեզ մի բան,  
որ դուցէ դու չգիտես:

Աղջիկները ունին ծուարաններ ճիշդ  
այնպէս ինչպէս ծաղիկներն ու թռչուն-  
ները եւ իւրաքանչիւր ձուարանի մէջ  
կան բազմաթիւ փոքրիկ ձուիկներ, որ  
մի ժամանակից յետոյ հասունանալու  
են, ինչպէս սերմերն են լինում, միայն  
փոխանտկ աճելու ծաղիկների ու թռւ-  
չունների նման, նրանք զարգանալով  
երախայ են լինում: Զմայլելի չէ<sup>o</sup>, եւ  
դու ուրախ չե<sup>o</sup>ս որ թերեւս մէկ օր, դու  
կարող պիտի լինես ունենալ քո սեփա-  
կան երախան: Բայց անշուշտ, այդ տա-  
կաւին տեղի չի ունենալու մի քանի  
տարի եւս, որովհետեւ դու պէտք է ըս-  
պասես, մինչեւ որ մեծանալով զօրա-  
ցած կին դարձած լինիս, եւ ունենաս քո  
սեփական բոյնը եւ մի ամուսին, օդնե-

լու եւ խնամք տանելու երախային:

Երբոր փոքրիկ ձուիկները հասու-  
նացել են պէտք է մի բոյն պատրաստել  
նրանց համար, ճիշդ այնպէս, ինչպէս  
որ պատրաստում էր ծաղիկների եւ  
թռչունների համար: Բայց այժմ, ես  
պէտք է ասեմ քեզ մի այլ զարմանալի  
գաղտնիք: Մայրերը կարիք չունին  
բոյն կառուցանելու, որովհետեւ նրանք  
արդէն նրանց համար պատրաստուել են  
հէնց իւրանց մարմնոյ մէջ, նրանց սրտի  
մօտ:

Բոյնը կոչւում է արգանդ: Թէեւ  
մենք կարիք չունինք կառուցանելու  
բոյնը, բայց պէտք է լաւ խնամք տա-  
նինք նրան, որպէս զի նա կարենայ զար-  
գանալ եւ ուժեղանալ: Այս բոյնն ու  
փոքրիկ ձուիկները անընդհատ աճում  
են աղջիկների երախայութիւնից սկսած:  
բայց նրանք այնքան դանդաղ են աճում  
որ ձուիկներից եւ ոչ մինը հասունանում  
են մինչեւ որ աղջիկները մօտ տասնեւ-

երկու տարեկան են դառնում: Դրանից  
յետոյ, ձուիկներից մէկ հատ իւրա-  
քանչիւր ամիս հասունանալով անցնում  
է դէպի բոյնը կամ արգանդը: Միեւնոյն  
ժամանակ մի յաւելեալ բովանդակու-  
թեամբ արիւն է ուղարկում արգանդը,  
հայթայթելու սննդական նիւթերը ձը-  
ւիկների համար, գործածելու նրանց  
զարգացման համար: Բայց արգանդը,  
կամ բոյնը տակաւին բաւականաչափ  
զօրաւոր չէ կրելու մի առողջ երախային,  
այնպէս որ յաւելեալ բովանդակութիւն  
ունեցող արիւնը ձուիկների հետ մար-  
մընից ուղարկում է դուրս իգափողի  
միջոցով, որը մի մկանային խողովակ  
է, որ առաջնորդում է արգանդից դէպի  
ներքին մասերը, (գաղտնի մասերը):

Մենք այս հեղուկը անուանում ենք  
ամսական կամ դաշտայն: Այս պատա-  
հում է ամէն ամիս եւ իւրաքանչիւր  
անգամ արգանդը մի փոքր աւելի ուժե-  
ղանալով աւելի ընդունակ է դառ-

նում աճող երախային պահելու: Բայց  
արգանդը կատարելապէս չի զարգա-  
նում, մինչեւ որ ամբողջ մարմնի մը-  
նացած մասերը չի հասունանան:

Ամսադաշտանը մայրութեան կա-  
րելիութեան նշան է: Ըմբռնելով այս ի-  
րողութիւնը մէկը չի կարող վրիպել  
ունենալու մի բարձր գաղափար այս  
գործառնութեան համար: Աղջիկներից  
շատերը, բնականէն ցանկանում են ու-  
նենալ երախաներ: Փոքրիկ աղջիկները  
սիրում են իրանց պաճուճապատանքնե-  
րը, եւ նրանց խնամելու համար շատ  
ժամանակ են տալիս, բայց երբ աղջիկ-  
ները մեծանալով մտնում են կանացիու-  
թեան շրջանին մէջ, նրանք ցանկանում  
են ունենալ իրական երախաներ: Մի կին  
որ չի ցանկանում ունենալ երախաներ  
իր միտքը խանդարուել է երկիւղի սխալ  
գաղափարներով:

ԳԼՈՒԽ Ե.

## ԵՐԱԽԱՑԻՆ ԲՈՅՆԸ

— o —

Դու յիշում ես, Մանուշակ, ես ասացի քեզ, որ թէեւ մայրերը կարիք չունին բոյներ կառուցանելու, բայց եւ այնպէս պարտաւորուած են լաւ խնամք տանելու նրանց:

Ինչպէս ամէն մի աղջկայ բնական ցանկութիւնն է, որ մէկ օր մայր դառնայ, նա պէտք է շատ կանուխէն սկսի պարաստուիլ դրա համար: Մարզանքով, մաքուր օղով եւ լաւ սննդարար կերակուրներով նա պէտք է, որ իր մարմինը զօրացնէ ու զարգացնէ: Ուսումնասիրելով եւ սովորելով նա զար-

գացնելու է իր միտքը, որպէս զի կարուղանայ խնամք տանելու եւ դաստիարակելու իր երախաներին:

Ես քեզ սորվեցնեմ թէ ինչ կերպով կարող ես քո բոյնը զօրաւոր դարձնել:

Առաջին. ես պէտք է ասեմ քեզ աւելի բաներ մայրական բոյնի մասին: Թէեւ փոքրիկ ձուիկները ամէն ժամանակ աճում են, բայց եւ այնպէս, մեծագոյն փոփոխութիւններ են կատարւում նրանց մէջ երբ որ աղջիկը տասներկու տարիքից մինչեւ տասնեւչորս տարեկան է լինում:

Այս ժամանակուայ ընթացքում նրանք չուտ են աճում քան թէ ոեւէ ուրիշ ժամանակ: Մինչ այս օրգանները աճում են, կոնքը (ողնաշարքը) կամ մարմնի մասերը, որ պարունակում է նրանց, նոյնպէս պէտք է աճին, նրանց տեղ տալու համար: Այսպէս, աղջրները աճում են լայն կերպով: Մարմնոյ միւս մասերը, որ նոյն պէս աւելի ա-

բագ են աճում, եւ յաճախ մասերից ո-  
մանք աւելի եւս յաճախ են աճում քան  
միւսները, համեմատութիւնից դուրս  
են գալիս եւ երախան դառնում է բիրտ  
եւ անճարակ զգում: Բայց այդ շատ եր-  
կար չի տեւելու, որովհետեւ մի քիչ  
յետոյ, այն մասերը, որ դանդաղ են  
աճում, հասնելու են նրանց, որ աճում  
են արագ, որից յետոյ, մարմինը նորից  
չնորհալի է լինելու:

Երբ եւ իցէ տեսել ես մի դեռատի  
շան ձագի: Դու գիտես թէ նա այնքան  
բիրտ ու անճարակ է երբ մեծանում է,  
բայց քիչ յետոյ, երբ լիապէս մեծա-  
նում է նա շատ չնորհալի է դառնում:  
Մենք գիտենք, որ խելօքութիւն չէ վա-  
զել կամ խաղալ, եւ կամ ծանր աշխա-  
տել անմիջապէս ճաշից յետոյ, որովհե-  
տեւ այդ ատեն ստամոքսը գործում է  
ծանր կերպով եւ կարօտ է շատ աւելի  
կնիքի, ուժի: Հետեւապէս, միւս մը-  
կանները պէտք է հանդստանան մի քիչ,

որպէս զի իրանց պաշտօնը կատարեն:

Դու յիշում ես, Մանուշակ, որ ես  
քեզ ասացի թէ ամէն ամիս կամ ամէն  
քսանեւութ օրը մի անգամ մի յաւելեալ  
քանակութեամբ արիւն հոսում է ար-  
գանդը, որը պէտք է գնայ մարմնից  
դուրս: Անշուշտ, այդ պահանջելու է  
որ օրգանը ծանր կերպով գործէ մի քա-  
նի օր:

Ուստի, որպէս զի կարելի լինի օդ-  
նել նրան, մենք պէտք է այժմ զգոյշ լի-  
նինք ուեւէ խիստ մարզանքներ անելուց:  
Կամ մենք մեզ ուեւէ կերպով ծանր աշ-  
խատանքների ենթարկելու, որովհե-  
տեւ, եթէ անենք, արգանդը չի կարող  
իր յաւելուած գործը կանոնաւորապէս  
կատարելու:

Դու յիշում ես, ես ասացի քեզ, այս  
հեղուկի մասին, որին մենք անուանում  
ենք, դաշտանային ամսական հեղուկ,  
որը մայրութեան կարելիութեան մի  
նշանն է, ուստի, ամէն աղջիկ պէտք է

ուրախ լինի այս իրողութեան համար,  
եւ պէտք է այդ ժամանակուայ ընթաց-  
քում իրան լաւ հոգ տանի:

Նա պէտք է մասնաւոր ուշադրու-  
թիւն դարձնէ մաքրութեան մասին այս  
շրջանում: Նա պէտք է առաջուանից  
պատրաստէ մի բոլորաձեւ գօտի մի ինչ  
որ զօրաւոր մէթէրիւայից սեպաձեւ  
կտրոնուած, որպէս զի առաձգական լի-  
նի, մատակարարելով քէազօ կապերով  
որը գնդասեղով ամրացւի ծալուած շո-  
րին: Նա նոյնպէս, պէտք է ունենայ  
պարենաւորում առողջապահիկ հա-  
գուստեղինների, որոնք շինուած լինին  
ծծուող բամպակի Փապրիքից կամ  
բարձիկներ բամպակից շինուած շղար-  
շով ներփակուած:

Այս վերջինները մասնաւորապէս  
յարմար են այն աղջկան համար, որը  
ստիպուած է տանից դուրս ապրիլ, ո-  
րովհետեւ նրանց կարելի է այրել, նո-  
րերը գնելը այնքան թանգ չի նստիր

որքան չորերի լուացուելու գինը: Այս  
բարձիկները, կամ չորերը, պէտք է  
փոխուին առնուազն օրը երկու անգամ:

Նոյնպէս կարեւոր է տաք ջրով լը-  
ւանալ մարմնի արիւնոտած մասերը  
իւրաքանչիւր անգամ, երբ չորերը փո-  
խում է, դրանով կարելի է խուսափիլ  
անհաճելի հոտերից:

Իւրաքանչիւր շրջանը լրանալուց,  
անհրաժեշտ է բաղնիք առնել եւ փոխել  
բոլոր չորերը: Այս հաբցում մէկը չի  
կարող զգոյշ չի լինել, որ այնքան էա-  
կան է մաքրութեան եւ առողջապահու-  
թեան համար:

Այս շրջանի ժամանակամիջոցում  
աղջիկները բնականէն յոդնածութիւն  
եւ տաղտկութիւն են զգում եւ կամ ան-  
տրամադրութիւն, անյօժարութիւն,  
որեւէ կարեւոր մտաւոր կամ Փիզիքա-  
կան աշխատութիւն կատարելու: Ընկե-  
րակցելով դրա հետ, թերեւս, անհաճ-  
գստութեան թեթեւ զգացում նաեւ կոն-

քային մասերում (մարմնի այն մասերը, որ պարունակում է արգանդն ու ձուարանները): Որովհետեւ շատեր այս ժամանակ տառապում են, յաճախ այդ բանը «բնական» են համարում, եւ թոյլ են տալիս, որ շարունակուի, բայց չի-մա, որ դու այնքան իմանում ես մարմնոյ մասին, դու հասկնալու ես, որ անհրաժեշտութիւն չէ, որ այս շրջանում որեւէ ցաւ ունենաս: Եթէ ցաւ կայ, այդ ցոյց է տալիս, որ մենք պէտք եղած խնամքը չենք տարել մեզ. նոյնիսկ մեր ստամոքսը կը տայ մեզ խիստ ցաւեր, եթէ մենք պատշաճ խնամք չի տառելով ծանրաբեռնենք նրան:

**Ամսահոսումը**      **քանակութեամբ**  
տարբերում է անհատի հետ: Սովորա-  
րար գիրուկ աղջիկները հոսում են ա-  
ւելի, քան թէ նիհար թխաղէմ աղջիկ-  
ները սպիտակամորթով: Հոսումը տե-  
սում է մօտաւորապէս չորս օր եւ միակ

ախտանիշն է, որ շատ աղջիկներ փորձա-  
ռութիւն են ունենում ամսականի ժա-  
մանակ: Սովորաբար այս է վիճակը նը-  
րանց, որոնք առողջ են, եւ նրանց  
կեանքը երջանիկ կերպով գործածում  
է:

Ես ուզում եմ, որ դու այս բոլորը  
իմանաս, Մանուշակ, որովհետեւ եր-  
բեմն, երբ փոքրիկ աղջիկները չեն հաս-  
կանում թէ ի՞նչ է նշանակում հոսումը,  
նրանք ահաբեկում են երբ արիւն են  
տեսնում: Կանանցից ոմանք, նոյն իսկ  
սոսկում են մայրութիւնից, որովհետեւ  
նրանք չեն իմանում թէ ինչ կարող են  
ակնկալել այդ ժամանակ, կամ ինչպէս  
խնամք տանիլ իրանք իրանց:

Բոլոր կանայք բնականէն սիրում են  
երախաները, եւ եթէ ուղիղ կերպով ու-  
սուցուի, նրանք սիրում են ունենալ ե-  
րախաներ: Եւ եթէ չեն ուզում, սովո-  
րաբար, նրա համար է, որ նրանք իմա-  
ցել են, որ ուրիշ կանայք տանջուել են

իրանց տգիտութեան չնորհիւ, եւ վասկենում են:

Եթէ նրանք աշխատին սովորել մերայս հրաշալի մարմնոյ, եւ աւելին, փոքրիկ երախաներին խնամք տանելու մասին եւ այն ատեն նրանք կը հասկնան, թէ ինչպէս իրանք իրանց հոգ են տանելու որպէս զի ունենան առողջ եւ երջանիկ երախաներ: Ոչ միայն այդ, այլ եւ նրանք տեսնելու են, որ այդ բնական է եւ լաւագոյն բանն է, որ երախաներ ունենան: Որեւէ գործ, որ մենք ձեռնարկում ենք, ամէն ինչ որ անում ենք մի դիպուածական կարելիութիւն կայ: Նոյն է եւ մայրութիւնը: Մի կին իր բնականոն առողջ վիճակում, որի տնային կեանքը համաբարոյ է, որը սիրում է երախաներ, եւ որը ցանկանում է ունենալ երախայ, երբեք որեւէ լուրջ նեղութեան չի հանդիպելու եւ ոչ էլ խոշոր ցաւերի: Անցաւ ծննդաբերութիւնը կարելիութիւն է, եթէ միայն կանայք

հասկնան իրանք իրանց խնամք տանիլ: Արդի մարզական աղջիկը շքեղացնում է իր կորովիութիւնը: Նա զգում է թէ չնորհազրկում է լինել մի դիւրաբեկ ծաղիկ, որ չի կարող մուտք գրտնել կեանքի ամենամեծ հաճոյքների մէջ:

Նա շքեղացնում է իր զօրաւոր մարզած մարմինը: Նա քալում է ազատ, բայց եւ չնորհալի քայլերով իր գլուխը բարձր պահած, որովհետեւ, նա իմանում է թէ ինքը թագուհին է իր թագաւորութեան մէջ: Իր մարմինը, նրա թոքերը լաւապէս զարգացել են եւ իր մարմինը լաւագոյն կերպով խնամուած է, ուստի, նա ոչ մի երկիւղ ունի հիւանդութիւնից: Բայց ժամանակակից աղջիկը կանգ չի առնում այնտեղ: Նա ցանկանում է ունենալ առողջ սեռային գործարաններ տեղ տալու, զարգացնելու եւ զօրաւոր մկաններով կատարել տալու իրանց գործը եւ երախային

դուրս վանելու։ Ուստի, նա մէկ կողմ է  
նետում այնպիսի հազուստներ, որոնք  
սեղմելով նեղացնում են նրա օրդաննե-  
րը։ Նա հազնուում է դիւրաբեկ եւ լաւ  
յարմարող հազուստներ։ Հին ձեւի  
սեղմիրանը (քորսէդ) քաշում է օրդան-  
ներին իրանց տեղերից, բայց արդիա-  
կանները շինուած են յարմարուելու բը-  
նութեան գծին, ծառայելու միայն որ-  
պէս մի նեցուկ։

Ըստ որում, բնութիւնը շինուած չի  
լինելով մի մէջքի գործ, մէկ կտորով  
կարուած շրջազգեստը մասնաւորապէս  
ցանկալի է։ Բացի իր մարմնի բոլոր օր-  
դանները (գործարանները) եւ մկան-  
ները զարգացնելն ու միտքը մշակելը,  
այժմեայ աղջիկը գնում է մարզական  
դպրոց պատրաստուելու մայրական կո-  
չումին։

Վերջերս մի քանի դպրոցներում  
ուսմունքի մի դասընթացք է հայթայ-  
թուած աղջկերանց համար, երախանե-

րին խնամք տանելու, առողջապահա-  
կան բաժանմունքներով։ Նոյն իսկ կա-  
նայք որոնք երբեք մայր չեն դառնում,  
այս կերպով սովորում են ընդհանուր  
սկզբունքներ բնախօսութեան եւ առող-  
ջապահութեան մասին, հոգ տանելու  
հիւանդին, որ գուցէ գործածեն կեանքի  
բոլոր կայարաններում։

Յոյս ունիմ, Մանուշակ, որ քիչ յե-  
տոյ, դու կարող պիտի լինիս սովորելու  
այս բաներից շատերը, այնպէս որ, երբ  
դու մի մեծացած կին դառնաս եւ ժա-  
մանակը գայ քեզ համար ամուսնանա-  
լու եւ երախայ ունենալու, դու իմանաս  
թէ ինչպէս պէտք է հոգ տանիս նրան։

ԳԼՈՒԽ Զ.

## ԿԱՌՈՒՑԱՆԵԼ ԲՈՅՆԸ

Հիմա, որ ես քեզ ասացի բազմաթիւ բաներ մայրական բոյնի մասին մասնաւորապէս, թէ նա ինչպէս մշտապէս աճում է: Ես պէտք է ասեմ քեզ նաեւ բազմաթիւ օգնողների մասին, որոնք օժանդակում են նրա աճումին:

Նրանք այս անում են հայթայթելով նրան սնունդ եւ փոխադրում են աւելորդ նիւթերը: Մենք դտանք, որ մարմինը բաղկացած է բազմաթիւ մասերից, որոնցից իւրաքանչիւրը ունի իր սովորական մասնաւոր գործը կատարելու: Եթէ օրգաններից որեւէ մէկը չի կարող կատարել իր գործը (պաշտօնը) մէկ ու-

րիշը պէտք է օգնէ նրան: Բայց, թէեւ, օրգանները պատրաստ են օգնելու մի-մեանց, սակայն, արդարացի չի կարող լինել բռնադատել մէկը, որ իր բաժինից աւելի գործ անէ, ի բաց առեալ մի կարճ ժամանակի համար:

Դու յիշում ես, որ ստամոքսը շատ մեծ պաշտօն ունի կատարելու, սնունդը մարսելու, կամ պատրաստելու նրան, որպէս զի արիւնը առնելով կարողանայ նրան տանելու դէպի արգանդն ու մարմնի բոլոր մասերը: Բայց ստամոքսը հարկադրուած չէ այս բոլորը միայնակ ինքն անելու: Նա ունի բազմաթիւ օգնողներ, օգնողներից մէկ դասը (շարքը) ատամներն են, որոնք կտրում եւ աղում են կերակուրները փոքր մասնիկների: Որպէս զի կարողանայ այս անել, նրանք պէտք է պահուին խիստ լաւ դրութեան մէջ, այլապէս, չեն կարող կատարել իւրանց պաշտօնը: Ինչպէս գիտես, եթէ քո մայրը խոհանոցի դանակները թող-

նէ, որ բթանան եւ կամ ժանգոտին, նա  
անկարող կը լինի նրանցմով կտրելու  
հացը, միսն ու այլ ուտելեղէն նիւթերը:  
Նոյնը ուղիղ է եւ ատամների մասին:  
Մենք կարող ենք պահել նրանց լաւ դը-  
րութեան մէջ, վրձինելով նրանց: Այս  
այնքան կարեւոր է որքան պնակները  
լուանալը: Ապա, առաւել եւս, մենք  
պէտք է զգոյշ լինենք չի կոտորելու ա-  
տամները խածնելով ընկոյզներ, եւ այլ  
կարծր բաներ: Ոչ մի բան այնքան չի ա-  
ղարտում մի աղջկայ արտաքին երեւոյ-  
թը, եւ ոչ մի բան այնքան աւելի սատա-  
րող, նպաստիչ է, անմարսողութեան,  
որքան անխնամ թողուած ատամները:

Նրանք պէտք է վրձինուին առնը-  
ւազն օրը երկու անգամ, եւ յետոյ, բե-  
րանը ցօղել մի մեղմ հականեխական ջը-  
րով: Ատամները պէտք է, որ լիովին  
քննուին մի լաւ ատամնաբուժից առնը-  
ւազն իւրաքանչիւր վեց ամիսը մի ան-  
դամ: Մի այլ օժանդակող, որ ստամոք-

սը ունի, փորոտիքը կամ աղիքներն են,  
որոնք ոչ միայն օգնում են, որ մարսուի  
ևնունդը այլ նաեւ դուրս են տանում ա-  
ւելորդ նիւթերը:

Աղիքները շատ լաւն են, եւ մեզ ա-  
սում են երբ որ նրանք աւելորդ նիւթեր  
ունին դուրս տալու, անհետացնելու:  
Բայց երբեմն, մարդիկ շատ զբաղուած  
լինելով ուշադրութիւն չեն դարձնում:  
Եթէ մենք անփոյթ լինինք, զանց առ-  
նենք նրանց, շատ անգամ աղիքները օգ-  
նում են մեզ այդ ասելու, եւ հետեւա-  
պէս, նրանց գործը չի կատարում:  
Մենք կարծում ենք, որ նրանք ծոյլ են,  
եւ հետեւապէս, մենք աշխատում ենք  
մտրակել նրանց լուծողականներ առնե-  
լով: Բստ երեւոյթին թւում է թէ սկըզ-  
բից նա օգնում է, բայց շուտով մենք  
գտնում ենք որ այդ միեւնոյն բանը ա-  
նելու ենք ամէն օր: Այս բոլոր ժամա-  
նակ յանցանքը մերն է, որովհետեւ,  
մենք վերահասու չ'եղանք: Լաւագոյն

կերողն այն է, որ կանոնաւոր ժամանակ  
ուննանք արտաքնոց գնալու, այսպէս  
ասած, նախաճաշից յետոյ: Եթէ մենք  
միշտ գնանք միեւնոյն ժամանակ, ա-  
ղիքները յիշելու են այդ: Որից յետոյ,  
մենք նեղութիւն չենք ունենար փորա-  
կապութեան, եւ ոչ էլ պէտք կ'ունենանք  
դեղերով մտրակելու աղիքները:

Մի կանոնաւոր առօրեայ աղիքների  
գործողութիւնը անհրաժեշտութիւն է  
առողջութեան համար: Փորակապու-  
թիւնը յաճախ կարելի է վտարել մեզա-  
նից, խմելով մի բաժակ սառը ջուր  
զարթնելուց յետոյ, եւ օրուայ ժամա-  
նակամիջոցում, եւ պառկելու ժամա-  
նակ: Մրգեղին ուտել նախաճաշում,  
կամ թուզ ճաշից յետոյ, յաճախ առաջն  
առնում է փորկապութեան:

Արտաքնոց գնալու կանոնապահու-  
թիւնը ամենակարեւոր պայմանն է փո-  
րակապութեան դարմանումին: Լուծո-  
ղականները կամ մարսողական դեղերը,

պէտք չէ որ առնուին, բացի մի գիպ-  
ուածական եւ կամ հիւանդութեան ըն-  
թացքում, բժշկի հրահանգով: Այնքան  
հասարակ է առօրեայ լուծողականների  
գործածութիւնը, որ դարձել է մի «ազ-  
գային անէծք»: Մարդիկ չեն ըմբռնում  
որ նրանք գերի են դարձել այս ունակու-  
թեան:

Այնքան ճարտար խօսքերով յայ-  
տարարուած բազմաթիւ լուծողական-  
ները մարդկանց առաջնորդում են հա-  
ւատալու, որ նրանք խմում են ինչ որ  
որոշ «ջուր» կամ «թէյ» ու խուսափում  
են դեղօրայքից, այն ինչ յաճախ այս  
միեւնոյն թէյերը եւ կամ ջուրերը պա-  
րունակում են դեղեր, որ աւելի ուժեղ  
են եւ վնասակար, քան թէ դեղահատ-  
ները:

Աղիքներն էլ օժանդակողներ ու-  
նին, որ օգնում են նրանց, եւս առաւել  
երիկամունքները, արտաթորում են  
մարմնի անօգուտ աւելորդ մասերը: Ի-

բապէս, նրանք այնքան բան են արտա-  
թորում, որ երբեմն նրանց անուանում  
են կոյուղի: Յաճախ կարիք է զգաց-  
ում քաղաքի կոյուղիները ողողել,  
այնպէս որ նրանց մէջ մեծ քանակու-  
թեամբ ջուր են բաց անում, որ ամբողջ  
կազմը մաքրուի: Միեւնոյն ձեւով ան-  
հաժեշտութիւն է ողողել երիկամունք-  
ները: Մենք այդ անում ենք առատ ջոր  
խմելով:

Ամեն ոք պէտք է, որ օրը մօտ երկու  
քութ ջուր խմէ:

Կայ մէկ ուրիշ գործող, որ օգնում  
է երկուսին էլ, երիկամունքներին եւ  
աղիքներին:

Այս մորթն է, որը վանում է դուրս  
աւելորդ նիւթերը փոքրիկ ծակերի կամ  
բացուածքների մէջից: Եթէ կեղտը հա-  
ւաքուի մորթի վրայ նա կը փակէ ծա-  
կերը, եւ մորթը չի կարող գործածել  
նրանց: Ուստի, տեսնում ես թէ որքան  
անհաժեշտութիւն է յաճախակի բաղ-

նիք առնելը, ծակոտիները բաց պահե-  
լու համար:

Ուրիշ օգնողներ, որ դուրս են տա-  
նում մնացած աւելորդ նիւթերից ոմանց  
թոքերն են, որոնք դուրս են ուղարկում  
անմաքուր օդը:

Թոքերը, նոյնպէս ստանում են մա-  
քուր օդ, որը ինչպէս յիշում ես, օգ-  
նում է տալու կարմիր գոյնի նիւթը ար-  
եան մէջ:

Եթէ ուզում ես, որ ունենաս զեղե-  
ցիկ կարմիր այտեր, դու պէտք է, որ  
չնչես առատ մաքուր օդ: Նոյնպէս, դու  
պէտք է ունենաս բաւական մարզանք,  
որպէս զի դրանով օգնած լինես արիւսը  
ուղարկելու մարմնոյ բոլոր մասերում:  
Դու գիտես, որ երբ վազում կարիւնը  
աւելի արագ է հոսում, քան երբոր հան-  
դարտ ես: Մի լաւ գաղափար է կանգ-  
նել մի բացուած պատուհանի առաջ ա-  
մէն առաւօտ, եւ ամէն երեկոյ, եւ լեց-  
նելով թոքերդ մաքուր օդով, քսանեւ-  
հինդ անդամ խորը շունչ քաշել:

որ մէկի համար օգտակար է, կարող է  
մէկ ուրիշի համար չի լինել:

Ընդհանրապէս, փորձուած եւ օգ-  
տակար գտնուած է երեկոները տաք ջը-  
րով երեսը ողողելը (լուանալը) կեղտերը  
մաքրելու համար, եւ յետոյ, եթէ մոր-  
թը անհարթ է մի լաւ քրիմով մասած  
անելը: Առաւօտները պէտք է առնել  
պաղ ջրով արագ շփում (եւ մի վախեցիր  
երեկոներն էլ մի քիչ շփել մարմինը):  
Եթէ գնալու ես գուրս արեգակի եւ քա-  
մու դիմաց, երեսներդ քսիր քալքըմ  
կամ բրինձի փոշի, դէմքդ ցրտաշունչ  
քամուց պաշտպանելու համար, կամ  
եթէ մորթը ենթակայ է չորանալու  
քոլտ քրիմ քսիր նախ քան փոշի գործա-  
ծելդ: Որեւէ բորբոքում դէմքի վրայ  
ցոյց է տալիս արեան շրջանառութեան  
մի թերութիւն: Արիւնը ըստ պատշաճի  
արտաթորում է աւելորդ նիւթերը, եւ  
թողնում է որ փակեն մորթի ծակերը:  
Այս բորբոքումները պէտք չէ որ զանց

ԳԼՈՒԽ Է.

## ԼԵԶՈՒԻ ՆՇԱՆԸ

Դու իմանում ես, որ մենք մէկ կեր-  
պով կարող ենք ասել թէ բոլոր օրգան-  
ները լաւապէս կատարում են իրանց  
գործը, պաշտօնը: Եթէ արիւնը բաւառ  
կանաչափ սնունդ չի տանում դէպի  
մորթը, նա շատ գունատ եւ նսեմ երե-  
ւոյթ է ստանում: Եթէ աւելորդ նիւթե-  
րը չեն հեռացւում, նրանք կարող են  
հաւաքուիլ մորթի վրայ ու փակել ծա-  
կերը:

Ապա, մենք կ'ունենանք բշտիկներ  
եւ պլէֆիկտեր: Իւրաքանչիւր անձի  
մորթը առ ինքնին մի կանոն է, եւ ինչ

առնուին, որովհետեւ նրանք երբեմն,  
ցոյց են տալիս արեան շրջանառութեան  
լուրջ դրութիւն:

Աչքերն ասում են, որ մենք յոգնել  
ենք, կամ լաւ չենք զգում, որովհետեւ  
նրանք աղօտ են լինում, այն ինչ, եթէ  
մենք նրանց չարաչար գործածենք եւ  
կամ լարենք, յաճախ կարմրում են: Այս  
ոչ միայն նրանց անում է նուազ ուշա-  
գրաւ, այլ ցոյց է տալիս, որ մենք պէտք  
է հոգ տանինք: Մի՞թէ սոսկալի չի լի-  
նելու, որ նրանք այնքան յոգնին կամ  
մաշուին, որ մենք չկարողանանք տես-  
նել նրանցմով: Աչքերին խնամքը խիստ  
կարեւոր է: Երբ որ դու կարդում ես  
եւ կամ գրում, լոյսը պէտք է որ գայ  
ձախ ուսի վրայից, եւ պէտք չէ որ աղօտ  
լոյսով կարդալու փորձ անես: Երբեմն,  
երբ աչքերը յոգնած են լինում, նրանք  
հանգստացւում են եթէ տաք եռացած  
ջրով լուանում ես նրանց, որին մէջ պո-  
րասիկ ասիտ է լուծուած: Դու նոյն իսկ

կարող ես մի քանի կաթիլ այս լծոյթից  
գնել ուղիղ աչքիդ մէջ, բայց բնաւ ու-  
րիշ բան մի գործածեր, բացի բժշկի  
կարգադրութիւնից, որովհետեւ աչքե-  
րը շատ թանկագին են վտանգի ենթար-  
կելու եւ յաճախ նրանք վնասւում են  
զանազան աչքի ջրերից:

Մազերը նոյնպէս ցոյց են տալիս ա-  
ռողջութեան վիճակը, եւ ցոյց են տա-  
լիս, որ մենք անփոյթ ենք: Ոչ մի բան  
այնքան չի աղարտում մի աղջկայ երե-  
ւոյթը, որքան աղտոտուած կամ ձիտ  
մազերը: Ամենազօրաւոր հմայքը, որ  
մի կին կարող է ունենալ մի լաւ պահ-  
ուած, ճոխ, ողորկ մազերով գլուխն է:  
Պարզապէս մտածիր թէ որքան արա-  
գութեամբ մարդ նկատում է ցանցառ,  
չորացած կարծր մազերը մի կնոջ գլխի  
վրայ:

Եւ ինչ վերաբերում է նրանց, որոնք  
դանկամաշկ հիւանդութիւն ունին եւ

ծեփուած են հոտած իւղերով, նրանք  
կատարելապէս անտանելի են:

Եթէ մարդիկ իմանան թէ նրանք  
որքան յարգանք են կորցնում այսպիսի  
թերութիւնների չնորհիւ, նրանք աւելի  
ուշադրութիւն կը դարձնէին խնդիրին:  
Մազերը պէտք է օճառով լուանալ յա-  
ճախ, որպէս զի մաքուր եւ թաւ պահ-  
ուի: Որքա՞ն յաճախ, այդ կախում ու-  
նիմազերի յատկութիւնից, եւ տիրոջ  
զբաղումից: Ընդհանրապէս մէկ կամ  
երկու շաբաթը մի անդամ լուալ բաւա-  
կան է: Բայց իւղալից մազերը գուցէ  
աւելի պահանջ զգան, որովհետեւ նը-  
րանք կորցնում են իրանց գեղեցկու-  
թիւնը, երբ շատ իւղուտում են: Մա-  
զերու ածումը զարգացնելու համար,  
զագաթնամաշկը մասած անելը սովո-  
րաբար տալիս է խիստ գոհացուցիչ ար-  
դիւնք, գրգռելով մի նոր աճում եւ ա-  
ռողջ երեւոյթ:

Զօրացուցիչ դեղերի արժէքը յա-

ճախ մասածին մէջն է: Մազերի զօրա-  
ցուցիչ դեղերից շատերը, որոնք ծախ-  
ուում են շուկայում, ոչ միայն օդուակար  
չեն, այլ վնասակար են: Մի սովորա-  
կան ձուի մարձում (գլուխը լուանալ)  
որը կարելի է տանը պատրաստել, գու-  
ցէ լաւագոյնն է, որովհետեւ նա ոչ մի-  
այն մաքրում է, այլեւ մազերին տալիս  
է սնունդ:

Ես պէտք է յիշեցնեմ քեզ քո մարմ-  
նի մէկ մասի նկատմամբ, որ մարդ-  
կանցից շատերը յաճախ ուշադրութիւն  
են դարձնում, եւ նրանից նրանք դա-  
տում են քեզ, եթէ դու անհոգ ես գտնը-  
ուում:

Դա քո ձեռներն ու եղունգներն են:  
Մարդիկ, որոնք ուշադիր են իրանց ե-  
ղունգներին երեւոյթին, ընդհանրապէս  
ուշադիր են եւ ուրիշ բաների մասին էլ:  
Դու որքան մեծանաս, պիտի նկատես,  
որ դու զատում եւ հասկանում ես, մեծ  
մասամբ փոքր բաներից:

Արժէ, եւ քեզ կը վճարէ, որ կէս  
ժամ առաջ վեր կենաս, եթէ անհրա-  
ժեշտ է, որպէս զի քիչ ժամանակ տաս,  
այս փոքրիկ անձնական խնամքին, որ  
օգնում է մի աղջկայ նրբաճաշակ լինե-  
լուն:

Դու զարմանալու ես, թէ ինչ ազ-  
դեցութիւն է անելու քո մտքի վրայ,  
երբ առանձին ուշադրութիւն դարձնե-  
լով մազերդ սանտրես, երեսիդ գոյնը  
զեղեցկացնելու, եղունգներդ փայլե-  
ցնելու, լաւ հազնուելու, նոյնպէս կո-  
կիկ ձեռնոցներ եւ կօշիկներ ունենալու:

Գևորգ Ը.

## ՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՔՈՒՆ

Դու տեսար, Մանուշակ, թէ ինչ-  
պէս մարմնի բոլոր մասերը միասին  
գործում են, թէ եւ նրանցից իւրաքան-  
չիւրը ունի իր մասնաւոր բաժինը կա-  
ստարելու: Դու յիշում ես, որ գտանք թէ  
ստամոքսը պէտք է ժամանակ ունենայ  
հանգստանալու կերակուրներուն միջեւ:  
Մարմնի միւս մասերը, նոյնպէս, պա-  
հանջում են հանգստութիւն, նրանք սո-  
վորաբար այդ անում են երբ մենք քը-  
նում ենք: Մենք պէտք չէ, որ զանց առ-  
նենք նրանց բաւականաչափ հանգստու-  
թիւն տալու, այլապէս, նրանք չուտով  
մաշուելով մեզ կը տան նեղութիւն:

Փոքը աղջիկներից շատերից պահանջում է ութը կամ տասը ժամ հանգստութիւն եւ քուն ամէն գիշեր։ Երբեմն, երբոր մարդիկ լաւ չեն զգում եւ կամ շատ յոգնած են լինում, նրանք գտնում են, որ լաւ չեն կարողացել քնել գիշերը։ Կան բազմաթիւ փոքրիկ բաներ, որ կարելի է անել քուն առաջացնելու համար։ Մի տաք բաղնիս պառկելուց առաջ, հետեւելով մի թեթեւ մասածի. մասնաւորապէս ողնայարի երկայնութեամբ յաճախ ներվէրն ու մըկանները թուլացնելով՝ շատ բարերար հետեւանք է առաջ դալիս։ Մի տաք ոտքերի բաղնիք, որը արիւնը ուղեղից հեռացնում է յաճախակի օգտակար կարելի է լինել։ Մի բաժակ տաք կաթ, կամ գօգօ ձիշդ պառկելուց առաջ խմելը, յաճախ նոյն ազդեցութիւնն է ունենում։ Եթէ քնատութիւնը անմարսողութեան հետեւանք է մի պարզ կերակրականոն կարող է օգնել։ Մի կարծր անկողնոյ

վրայ, առանց բարձի պառկելը, երբեմն առաջացնում է ցանկալի արդիւնք։ Միշտ առատ մաքուր օդ ունեցիր սենեակումդ։ Միտքդ ազատ պահիր օրուայ մտահոգութիւններից։ Եթէ նրանք ներս սպրդին, հեռացուր նրանց, կրկնելով խաղաղացնող պարբերութիւն, կամ մի կտոր բանաստեղծութիւն։ Մէկ լաւ ձեւն է փակել ձախ քթի ծակը, մատով վրան սեղմելով, ապա, չորս անգամ խորը շունչ քաշել աջ քթով։ Կրկնիր այս բանը չորս անգամ։ Ապա, մեղմ չնչիր երկու քթի ծակերով, բայց համբերը քո չնչումները։

Սակաւ է պատահում, որ շատ համբես։ Երբեք քնացնող փոշիներ կամ դեղահատներ մի գործածեր, եթէ ոչ, միայն եւ բացառաբար բժշկի հրահանդով ընդունիր, որովհետեւ նրանք ընդհանրապէս պարունակում են դեղեր, որոնք վնասում են սրտին։ Դու գիտնալու ես, Մանուշակ, որ հանդիպելու ես մի շարք

կանանց, որոնք ջղային են, որը նշանակում է թէ նրանք չեն կառավարել իրանց ջիղերը, այլ թոյլ են տուել, որ լնթանայ հեռու նրանց հետ:

Երբեմն, այս ցոյց է տուել սրտի բարախումով, գլխացաւով, կոնակացաւով (քամակի) եւ բազմաթիւ ուրիշխանգարումներով: Կարող է հաւանական ձգտում ունենալ լաց լինելու փոքր բաների համար, կամ մելամաղձոտ ըգդալու: Այս բոլորի պատճառը, ընդհանրապէս կարելի է գտնել անհամարարոյ շրջազգեստի կամ պարապմունքի բարեկամների կորուստի, ենթադրական կամ իսկական ու ֆինանսական նեղութիւնների: Ինչ որ էլ լինի պատճառը պէտք է հեռացնել, եթէ կարելի է, եւ չափաւորութիւնով կազդուրել յոդնածներվէրը եւ ջիղերը, որոնք հանգստութիւն, սնունդ են ուղարկում:

Կազդուրիչ խմելիքները օգնում են նոյնը անում են սննդարար կերակուր-

ները որպիսիք են ձու եւ կաթ, նոյնպէս պարապմունքը եւ տեսարանի փոփոխութիւնը, եթէ կարելի է: Ե՞րբ որ մի կին ջղային է յաճախ չի ըմբռնում թէ ի՞նչ է պատճառը իր դրութեան, եւ ի նկատի է ունենում միայն ախտանիշերը: Ուստի, երբ որ նա գլխացաւ է ունենում, դիմում է գլխացաւի փոշիների եւ զանազան պղպջացող ջրերի: Առնելով դրանց նա միայն մեռցնում է ցաւը, բայց չի հեռացնում պատճառը եւ հետեւապէս ցաւը ենթակայ է վերադառնալու: Դեղերից շատերը, որ գըլխացաւի համար առնւում են, պարունակում են ինչ որ վնասակար դեղեր մոքֆին, ֆէնէստին, կամ էսդէնալիդ, որ խիստ ճնշիչ են սրտին: Ցաւը չարչարուած ջիղերի լացն է, ուստի եթէ մէկը տանջւում է գլխացաւով կամ քամակացաւով, նա պէտք չէ, որ առնէ որ եւ է այս վնասակար դեղերից, այլ պէտք է որոնէ ցաւի պատճառը ու հեռացնէ նրան:

ԳԼՈՒԽ Թ.

## ԲՈՅԱՀԻՆ ՎՆԱՄՈՒՄԸ

ՄԵՆՔ որ սիրում ենք թռչուններին,  
ոչ մի բան չենք աներ վնասելու նրանց  
տունը, բայց գտնում են երախաներ,  
որոնք չեն սովորել սիրել թռչուններին,  
կամ որոնք անմիտ, անխորհուրդ են ու  
վնասում են նրանց բոյներին երբեմն,  
նոյն իսկ ծուառում, բեկորների վերա-  
ծում եւ կոտորում են ծառի ճիւղը: Գտ-  
նում են նոյնպէս անխորհուրդ երա-  
խաներ, որոնք վնասելու բաներ են ա-  
նում իրանց մարմնին: Դու չափազանց  
յիմարութիւն ես համարելու, եթէ թոյլ  
տաս ոեւէ մէկին մի մեղու դնելու քո

դէմքի վրայ, որ քեզ խայթէ: Սակայն,  
գտնում են անխորհուրդ երախաներ,  
որոնք այդ անում են, եթէ միայն թոյլ  
տան նրանց:

Նրանք գուցէ նոյն իսկ փորձեն ա-  
սելու քեզ, թէ նա քեզ չի վնասելու,  
բայց անշուշտ դու աւելի լաւը իմանում  
ես: Դու որ գիտես թէ ինչպէս մարմնի  
բոլոր մասերը անհրաժեշտութիւն են,  
թոյլ չեն տալու որեւէ մէկին վնասելու  
նրա որեւէ մէկ մասին մասնաւորապէս  
այն մասին, որ պարունակում է մայրա-  
կան բոյնը: Մտածիր թէ որքան վատ  
զգացած պէտք է լինի մայր թռչունը,  
երբ երախան փչացը ել է բոյնը, եւ մը-  
տածիր թէ, որքա՞ն դու վատ ես զգա-  
լու, երբ ժամանակը դայ քեզ ամուսնա-  
նալու, երախայ ունենալու, եւ եթէ  
գտնես, որ բոյնը այնքան վնասուել է,  
որ դու չես կարող երախայ ունենալ:  
ինչպէս իմանում ես բոյնը, նոյնպէս եւ  
մարմնի միւս մասերը միայն քեզ է

պատկանում, եւ ոչ ոք իրաւունք ունի  
վնասելու նրան: Բայց Երբեմն, աղջ-  
կերք այնքան անզգոյշ եւ անխորհուրդ  
են, որքան մեղուի հետ եղող տղան, որ  
անում է բաներ, որոնք վնասակար են:

Ես ասել եմ քեզ, թէ ինչպէս պէտք  
է խնամք տանիս, այս մայրական բոյ-  
նին, որպէս զի լաւ կերպով աճի եւ զար-  
դանայ, բայց հիմա ես պէտք է ասեմ  
մի քիչ աւելին:

Այն ինչ դու դուրս ես գնում աշ-  
խարհի հետ ծանօթանալու, դու հան-  
դիպելու ես աղջկերանց եւ տղերանց ո-  
մանց, որոնց երբեք ասուած չեն այս  
բաները եւ չեն հասկանում այս բոլոր  
բաները այնպէս ինչպէս դու: Երբեմն,  
նրանք ունենում են շատ սխալ գաղա-  
փարներ, եւ անում են բաներ, որոնք  
վնասակար են: Ոչ միայն այդ, այլ նը-  
րանք փորձում են քեզ էլ անել տալու  
նոյն բաները: Փոքրիկ աղջկերանց ո-  
մանք, որոնք չեն հասկանում թէ ի՞նչի

համար է նրանց օրդանները (գործա-  
րանները) նոյն իսկ խաղում են նրանց  
հետ, որովհետեւ նրանք կարծում են  
թէ նրանք տալիս են մի հաճելի զգացո-  
ղութիւն: Ես վստահ եմ թէ նրանք այդ  
չեն անելու երբ նրանք հասկնան, որ  
այդ անելով նրանք վնասում են թանկա-  
դին բոյնին:

Դու իմանում ես, որ եթէ դու եւ  
կամ ոեւէ մէկը քո աչքերում կամ ա-  
կանջներում բան դնէ, կամ նրանց հետ  
խաղայ որեւէ կերպով գուցէ կորցնեա  
քո տեսողութիւնն ու լսողութիւնը:  
Նոյնն են մայրական բոյնն ու այլ օր-  
գանները: Լաւագոյն ծրագիրն այն է,  
որ ճիշդ նրանք պահուեն մաքուր, եւ  
չդպչիլ նրանց որեւէ ժամանակ, եւ ոչ  
էլ թոյլ տալ որ ուրիշներ դպչին: Բայց  
այդ մասերը լուսալու դէպքում,  
պէտք է զդոյշ լինես, միշտ ունենալու  
քո սեփական սրբիչը, եւ չի գործածել  
որեւէ չոր, որ գործածուել է ուրիշ

մարդկանցից, որովհետեւ կայ մի զար-  
հուրելի հիւանդութիւն, որ կոչում է  
սեւ ժանտախտ, որ կարող է անցնիլ այս  
օրգաններից ներս :

Եւ այդ հիւանդութիւնները երբեմն փչացնում են բոյնն ու ձուիկները: Ուստի, զու պէտք է զգոյշ լինես քո բոլոր անելիքների մէջ:

Եթէ որեւիցէ ժամանակ, Մանու-  
շակ, հարցումներ կան քո մտքում թէ  
ի՞նչ է լաւագոյն բանը քեզ համար ա-  
նելու, յիշի՛ր, որ մայրդ ուրախու-  
թեամբ քեզ պատասխանելով նրանց,  
օգնելու է քեզ, նոյնպէս, երբ ձեռք ձը-  
գես այնպիսի գրքեր որոնք բացատրե-  
լու են քեզ պէտք եղած բաներո:

Մի դիմիր քո ընկերներին, որովհետեւ գուցէ նրանք չի հասկնալով քեզ տան սխալ գաղափարներ։ Դպրոցում մենք ունինք դասադրքեր եւ դասատու՝ որ չափահաս եւ աւելի փորձառու են քան մենք ենք, որին մենք կարող ենք

պնալ եւ խնդրել նրանցից օգնութիւն,  
մեր դպրոցական խնդիրների համար:

Մենք իմանում ենք, որ նա ասելու  
է մեզ ուղիղ լուծումը, եւ մենք գիտենք  
որ լաւագոյնն է դիմել նրան, քան թէ  
ուրիշ աշակերտներին:

Ուստի, մեր մարմինը ուսումնասիրելու եւ նրանց խնամք տանելու գործում, մենք պէտք է սովորինք մէկ ուրիշից, որը մեզանից աւելի տարէց եւ փորձառու է, եւ կամ մենք պէտք է սովորինք այն գրքերից որոնք գլուած են այս նպատակի համար:

Ապա, մենք վստահօրէն կը ստա-  
նանք ուղիղ գաղափար: Ժամանակից յե-  
տոյ, երբ որ դու մեծանաս, եւ ժամա-  
նակը հասած լինելով ամուսնանաս, ես  
քեզ կ'ասեմ ինչ ինչ բաներ երախան իմը-  
նամելու եւ մի լաւ բնաւորութեամբ օժ-  
տուած առողջ երախայ ունենալու մա-  
սին:

Բայց այժմ, ինչ որ կը կարօտիս ա-



Նել մի շարք տարիների ընթացքում, այն է, որ լաւ հոգ տանիս այս մայրական բոյնին եւ քո մարմնոյ այլ բոլոր մասերին, որպէս զի նրանք աճելով զօրանան եւ լաւ վիճակում մնան:

133

ԳԵՐՋ



2013

## «Ազգային գրադարան



ML0072431

15